

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԹԱՌԱԹՈՒՄԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«11» օգոստոսի 2014թ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77.1-77.6 հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2014 թվականի մարտի 10-ի N 11 որոշումը՝

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Նորայր Սիմոնյանի, սոցիալական ապահովության և առողջապահության վարչության առաջատար մասնագետ Յողիկ Բաբայանի, ընտանիքի կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Վարդգես Իսախանյանի, զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Վանիկ Խուդավերդյանի, հողաշինության և հողօգտագործման բաժին՝ մարզային հողային պետական տեսչության գլխավոր մասնագետ Սմբատ Խլիսայանի, գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի տեղակալ Բագրատ Մարգարյանի, ֆինանսական վարչության պետ Ռազմիկ Հայրապետյանի, իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ Աիդա Մանասերյանի և ՀՀ ԱԻՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի պետ, վարչության պետի տեղակալ Սահակ Ոսկանյանի կողմից ՀՀ Վայոց ձորի մարզի Թառաթումբի գյուղական համայնքում իրականացվեց վարչական հսկողություն ուստիկանության, սոցիալական պաշտպանության, պաշտպանության, հողօգտագործման, անասնաբուժության, բուսասանիտարիայի և սննդամթերքի անվտանգության, արտակարգ իրավիճակների, տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների նկատմամբ իրականացվող վարչական հսկողության բնագավառներում:


1. Վարչական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արածանագրությունը՝ համաձայն հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ կից հավելվածների:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Նշումներ / վարչական հսկողության արդյունքների վերաբերյալ համայնքի ղեկավարի առարկությունների և վարչական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/.


4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Վայոց ձորի մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Թառաթումբի գյուղական համայնքի ղեկավարին:

Նորայր Սիմոնյան (աշխատանքային խմբի ղեկավար)



/ստորագրություն/

Յողիկ Բաբայան (աշխատանքային խմբի անդամ)




/ստորագրություն/

Վարդգես Իսախանյան (աշխատանքային խմբի անդամ)



/ստորագրություն/

Վանիկ Խուդավերդյան (աշխատանքային խմբի անդամ)




/ստորագրություն/

Աիդա Մանասերյան (աշխատանքային խմբի անդամ)




/ստորագրություն/

Սմբատ Խլիխայան (աշխատանքային խմբի անդամ)




/ստորագրություն/

Բագրատ Մարգարյան (աշխատանքային խմբի անդամ)



/ստորագրություն/

Ռազմիկ Հայրապետյան (աշխատանքային խմբի անդամ)



/ստորագրություն/

Սահակ Ոսկանյան (աշխատանքային խմբի անդամ)



/ստորագրություն/

Գագիկ Մաթևոսյան (Թառաթումբի գյուղական համայնքի ղեկավար)



/ստորագրություն/

**2014 թվականի երրորդ եռամսյակում ՀՀ Վայոց ձորի մարզի Թառաթումբի
գյուղական համայնքում իրականացված վարչական հսկողության ընթացքում
հայտնաբերված թերությունների վերաբերյալ տեղեկանք**

Թառաթումբի գյուղական համայնք

Հավելված 1. Արտակարգ իրավիճակների բնագավառ

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
1	2	3	4	5	6	7
<p>1. Տարահանված բնակչության կենսապահովում. Բնակչության կենսապահովման գործընթացների նախապատրաստման միջոցառումների պլան</p>			<p>V Բնակչության կենսապահովման գործընթացների նախապատրաստման միջոցառումների պլանը չի մշակվել</p>	<p>Բնակչության կենսապահովման գործընթացների նախապատրաստման միջոցառումների պլանը չի մշակվել, չեն կատարվել ՀՀ կառավարության 2010 թվականի հուլիսի 24-ի ՀՀ Տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում կենսապահովման կարգը հաստատելու մասին>> թիվ 824-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները, համաձայն որի պետք է մշակել բնակչության կենսապահովման գործընթացների նախապատրաստման միջոցառումների պլան</p>	<p>առաջարկվել է մշակել միջոցառումների պլանը համագործակցելով ՀՀ ԱԻՆ ՓԾ մարզային փրկարարական վարչության հետ</p>	<p>մինչև 30.12.14թ</p>

<p>2. Ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանություն. Համայնքի ղեկավարի կողմից մշակված, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության համապատասխան տարածքային ստորաբաժանման ղեկավարի հետ համաձայնեցված, համապատասխան պետական կառավարման տարածքային մարմնի ղեկավարի կողմից հաստատված ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլան Ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի իրականացման համար՝ պլանների համակողմանի ապահովման մասին հայտերի ներկայացում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն</p>		<p>V պլանը չի մշակվել հայտեր չեն ներկայացվել</p>	<p>Պլանը չի մշակվել, Չեն պահպանվել ՀՀ կառավարության 10.06.2011թ. N 919-Ն որոշման պահանջները, ՀՀ կառավարության 2011թ հունիսի 10-ի ՀՀ Ուժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ բնակչության պաշտպանության կազմակերպման պլանը հաստատելու մասին» N919-Ն որոշում, կետ 7</p>	<p>Առաջարկվել է մշակել պլանը սահմանված կարգով, առաջարկվել է ներկայացնել անհրաժեշտ հայտեր</p>	<p>մինչև 30.12.14թ</p>
<p>3. Համայնքների ղեկավարների կողմից ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն սեյսմիկ ռիսկի գնահատման աշխատանքների կատարման հայտերի ներկայացում, սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի առկայություն</p>		<p>V /Համայնքի ղեկավարի կողմից սեյսմիկ ռիսկի գնահատման աշխատանքների կատարման հայտ է ներկայացվել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն/</p>	<p>Սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզ առկա չէ, չեն պահպանվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 1351-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները</p>	<p>Ֆինանսական հնարավորությունների առկայության դեպքում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ներկայացնել տեխնիկական առաջադրանք սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի մշակման նպատակով</p>	
<p>4. Համայնքների զարգացման ծրագրերում սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների ներառում</p>		<p>V Համայնքի զարգացման ծրագրում սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումներ ներառված չեն</p>	<p>Չեն պահպանվել ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի N 1351-Ն որոշման պահանջները</p>	<p>Առաջարկվել է համայնքի ապագա զարգացման ծրագրերում նախատեսել սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումներ</p>	

Հավելված 2. Սոցիալական պաշտպանության բնագավառ

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
1	2	3	4	5	6	7
<p>1. «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի՝ 6-րդ հոդվածի 2-րդ մաս. բուժական, դաստիարակչական, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում, անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից, գտնվող կամ բնակվող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները կամ նրանց օրինական ներկայացուցիչներն իրավունք ունեն պահանջելու պարբերաբար ուսումնասիրել խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչներին՝ երեխաներին տրամադրվող ծառայությունների համապատասխանությունը: Տվյալ ուսումնասիրությունները կազմակերպում են Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը և տեղական ինքնակառավարման մարմինները՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կամ նրանց օրինական ներկայացուցիչների դիմումների հիման վրա, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Նշված կազմակերպություններում պաշտոնատար անձինք պարտավոր են վերացնել բացահայտված խախտումները և տեղեկացնել այդ մասին լիազորված պետական կառավարման մարմին կամ տեղական ինքնակառավարման մարմին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետներում: 11-րդ հոդվածի 1-ին մաս Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները հատուկ հոգածության և պաշտպանության իրավունք ունեն պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, որոնք պետք է նպաստեն երեխաների լիարժեք կենսագործունեությանը և զարգացմանը, ինչպես նաև ապահովեն նրանց</p>			<p>V «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների նկատմամբ խնամակալության և հոգաբարձության մարմինը ձեռնարկում է միջոցներ օրենքով սահմանված կարգով»:</p>	<p>Դրույթի պահանջները պահպանված չէ, չեն պահպանվել Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի, 11-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները. այն է «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների նկատմամբ խնամակալության և հոգաբարձության մարմինը ձեռնարկում է միջոցներ օրենքով սահմանված կարգով»՝ համաձայն որի անհրաժեշտ է իրազեկել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ծնողներին սոցիալական երաշխիքներից օգտվելու հնարավորությունների մասին</p>	<p>Առաջարկվել է այսուհետ խստագույնս պահպանել դրույթի պահանջները</p>	<p>1 ամիս</p>

<p>մասնակցությունը հասարակական կյանքին:</p> <p>2. «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի՝ (այսուհետ՝ օրենք) 18-րդ հոդվածի պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հաշմանդամի աշխատանքային զբաղվածության երաշխիքներն ապահովվում են՝</p> <p>1) հաշմանդամների աշխատուժն օգտագործող կազմակերպությունների, հիմնարկների, ինչպես նաև հաշմանդամների հասարակական կազմակերպությունների նկատմամբ արտոնյալ ֆինանսատնտեսական քաղաքականության իրականացմամբ:</p> <p>2) կազմակերպություններում հաշմանդամներին աշխատանքի ընդունելու համար քվոտաների և հաշմանդամների համար՝ օրենսդրությամբ սահմանված միջոցառումների իրականացմամբ:</p> <p>3) հաշմանդամներին առավել համապատասխանող մասնագիտություններով աշխատանքային տեղերի վերապահմամբ:</p> <p>4) հաշմանդամների համար լրացուցիչ աշխատատեղերի ստեղծման խրախուսմամբ:</p> <p>5) հաշմանդամին աշխատանքի տեղավորելու դեպքում գործատուին հաշմանդամին վճարվող աշխատավարձի մասնակի փոխհատուցմամբ:</p> <p>2. Օրենքի 21-րդ հոդված՝ Հայաստանի Հանրապետության պետական իշխանության և կառավարման մարմինները, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր կարգի գործատուները հաշմանդամների համար ապահովում են սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտների, բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և կառույցների մատչելիության, հասարակական տրանսպորտից և տրանսպորտային հաղորդակցության, կապի և տեղեկատվության միջոցներից, հանգստի և ժամանցի վայրերից անարգել կերպով օգտվելու պայմանների ստեղծումը:</p>	<p>V</p> <p><<Հայաստանի Հանրապետության պետական իշխանության և կառավարման մարմինները, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր կարգի գործատուները հաշմանդամների համար ապահովում են սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտներին, բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և կառույցների մատչելիության, կապի և տեղեկատվության միջոցներից, հանգստի և</p>		<p>Թեքահարթակ չկա՝ համայնքապետարանում և մշակույթի տանը,</p> <p>չեն պահպանվել «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի պահանջները</p>	<p>Առաջարկվել է թեքահարթակ կառուցել</p>	<p>1 ամիս</p>
---	---	--	---	---	---------------

		ժամանցի վայրերից անարգել կերպով օգտվելու պայմանների ստեղծումը>>:				
--	--	--	--	--	--	--

Հավելված 3. Պարտադիր լիազորությունների բնագավառ

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է պահպանված	Պահպանված է	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
1	2	3	4	5	6	7
1. Համայնքի ղեկավարի ներկայացմամբ կամավոր լիազորությունների իրականացման կարգի և անհրաժեշտ ֆինանսական միջոցների վերաբերյալ որոշման առկայություն:			V << Համայնքի ավագանին որոշում է կամավոր լիազորությունների իրականացման կարգը և անհրաժեշտ ֆինանսական միջոցները՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ>>:	Դրույթի պահանջները պահպանված չեն, <u>2ի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջը՝ համաձայն որի ավագանին պետք է հաստատի համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման կարգը	Առաջարկվել է ձեռնարկել միջոցներ դրույթի պահանջները պահպանելու ուղղությամբ	1 ամիս
2. Համայնքի քաղաքաշինական կանոնադրության հաստատման վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն:			V << Համայնքի ավագանին հաստատում է համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը, ինչպես նաև ՏԻՄ օրենքի 37-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետով սահմանված քաղաքաշինական այն փաստաթղթերը, որոնց պատվիրատուն է համայնքը >>:	Դրույթի պահանջները պահպանված չեն, <u>2ի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 28-րդ կետի պահանջը՝ համաձայն որի ավագանին պետք է որոշում ընդունի համայնքի քաղաքաշինական կանոնադրության հաստատման վերաբերյալ	Առաջարկվել է ձեռնարկել միջոցներ դրույթի պահանջները պահպանելու ուղղությամբ	Մինչև 2015 թվականի հունվարի 1-ը
3. Համայնքի հողերի օգտագործման սխեմաները հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն:			V << Համայնքի ավագանին Հայաստանի Հանրապետության	Դրույթի պահանջները պահպանված չեն, <u>2ի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման	Առաջարկվել է ձեռնարկել միջոցներ դրույթի պահանջները պահպանելու ուղղությամբ	1 ամիս

		<p>օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով որոշում է ընդունում համայնքի հողերի օգտագործման սխեմաները հաստատելու մասին >>:</p>	<p>մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 28.1-րդ կետի պահանջը՝ համաձայն որի ավագանին պետք է որոշում ընդունի համայնքի հողերի օգտագործման սխեմաների հաստատման վերաբերյալ</p>		
<p>4. Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ որոշման առկայություն:</p>		<p>V <<Համայնքի ավագանին հաստատում է համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը >>:</p>	<p>Դրույթը պահպանված չէ, <u>2ի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 10 կետի, 10.1-րդ հոդվածի, 16-րդ հոդվածի 33 կետի, 32-րդ հոդվածի 10.1 կետի պահանջները՝ համաձայն որի ավագանին պետք է ընդունի համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ որոշում</p>	<p>Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով</p>	<p>1 ամիս</p>
<p>5. Համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակի, անվանումների ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ որոշման առկայություն:</p>		<p>V <<Համայնքի ավագանին հաստատում է համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները ու ձևավորման կարգը >>:</p>	<p>Դրույթը պահպանված չէ, <u>2են պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 34-րդ կետի, 32-րդ հոդվածի 10.2 կետի պահանջները՝ համաձայն որի ավագանին ընդունում է որոշում համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակի, անվանումների ու ձևավորման կարգի հաստատման վերաբերյալ</p>	<p>Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով</p>	<p>1 ամիս</p>
<p>6. Համայնքի ղեկավարի որոշմամբ հաստատված աշխատակազմի գործավարության կարգի առկայություն:</p>		<p>v Համայնքի ղեկավարը հաստատում է աշխատակազմի գործավարության կարգը</p>	<p>Դրույթը պահպանված չէ, <u>2ի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները՝ համաձայն որի համայնքի ղեկավարը որոշում է ընդունում</p>	<p>Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով</p>	<p>1 ամիս</p>

<p>7. Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանուն ներկայացված առաջարկության առկայություն:</p>		<p>V <<Համայնքի ավագանին հաստատում է համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը >>:</p>	<p>աշխատակազմի գործավարության կարգի վերաբերյալ Դրույթը պահպանված չէ, <u>2ի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> << օրենքի 9-րդ հոդվածի 10 կետի, 10.1-րդ հոդվածի, 16-րդ հոդվածի 33 կետի, 32-րդ հոդվածի 10.1 կետի պահանջները՝ համաձայն որի համայնքի ավագանին առաջարկություններ է ներկայացնում համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգի հաստատման վերաբերյալ</p>	<p>Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով</p>	<p>1 ամիս</p>
<p>8. Համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումներն ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանուն ներկայացված առաջարկության առկայություն:</p>		<p>V <<Համայնքի ավագանին հաստատում է համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները ու ձևավորման կարգը >>:</p>	<p>Դրույթը պահպանված չէ, <u>2են պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> << օրենքի 16-րդ հոդվածի 34-րդ կետի, 32-րդ հոդվածի 10.2 կետի պահանջները՝ համաձայն որի համայնքի ավագանին առաջարկություններ է ներկայացնում համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումներն ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ</p>	<p>Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով</p>	<p>1 ամիս</p>
<p>9. Համայնքի քաղաքաշինական, բնապահպանական, գյուղատնտեսական և այլ կադաստրների օրենքով սահմանված կարգով վարում:</p>		<p>V <<Համայնքի ղեկավարը սահմանված կարգով վարում է համայնքի քաղաքաշինական, բնապահպանական, գյուղատնտեսական և այլ կադաստրները:</p>	<p>Դրույթի պահանջը պահպանված չէ, <u>2ի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> << օրենքի 32-րդ հոդվածի 19-րդ կետի պահանջը՝ համաձայն որի համայնքի ղեկավարը սահմանված կարգով վարում է համայնքի քաղաքաշինական, բնապահպանական, գյուղատնտեսական և այլ կադաստրները</p>	<p>Առաջարկվել է ձեռնարկել միջոցներ նշյալ դրույթի պահպանման ուղղությամբ</p>	<p>Մինչև 2015 թվականի հունվարի 1-ը</p>

<p>10. Համայնքի ավագանու որոշմամբ հաստատված . համայնքի զարգացման քառամյա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) գործընթացներում համայնքի քնակիչների մասնակցությունն ապահովելու համար աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ընդգրկմամբ, ինչպես նաև համայնքի ավագանու մեկից մինչև երեք անդամների, քնակիչների, փորձագետների և այլ շահագրգիռ անձանց ներգրավմամբ (վերջիններիս համաձայնությամբ) ստեղծված համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմնի առկայություն:</p>		<p>V <<Համայնքի ավագանին հաստատում է համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները ու ձևավորման կարգը >>:</p>	<p>Դրույթը պահպանված չէ, <u>Չեն պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 34-րդ կետի, 32-րդ հոդվածի 10.2 կետի, 54.1-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջները պահանջները՝ համաձայն որի համայնքի ավագանին հաստատում է համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները ու ձևավորման կարգը</p>	<p>Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով</p>	<p>1 ամիս</p>
<p>11. Օրենքով սահմանված կարգով՝ համայնքի զարգացման քառամյա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի նախագծերի վերաբերյալ հանրային բաց խումներ և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման վերաբերյալ աշխատանքների առկայություն:</p>		<p>V <<Համայնքի ղեկավարը մինչև համայնքի զարգացման քառամյա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի նախագծերը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը կազմակերպում և անցկացնում է հանրային բաց խումներ և (կամ) քննարկումներ >>:</p>	<p>Դրույթը պահպանված չէ, <u>Չեն պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 54.1 հոդվածի 2-րդ մասի պահանջները՝ համաձայն որի Համայնքի ղեկավարը մինչև համայնքի զարգացման քառամյա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի նախագծերը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը կազմակերպում և անցկացնում է հանրային բաց խումներ և (կամ) քննարկումներ</p>	<p>Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով</p>	<p>Մինչև 01.01. 2015թ</p>
<p>12. Համայնքի քնակչության կենսաապահովման խնդիրները լուծելու նպատակով մատուցվող ծառայությունների՝ ջրամատակարարման, ջրահեռացման, ոռոգման, ջեռուցման, աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման, բազմաբնակարան շենքերի սպասարկման և այլ ծառայությունների իրականացման համար օրենքով սահմանված կարգով վճարների սահմանման ուղղությամբ կատարված աշխատանքների առկայություն:</p>		<p>V << Համայնքի քնակչության կենսաապահովման խնդիրները լուծելու նպատակով մատուցվող ծառայությունների՝ ջրամատակարարման, ջրահեռացման, ոռոգման, ջեռուցման, աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման,</p>	<p>Դրույթը պահպանված չէ, <u>Չեն պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի պահանջները՝ համաձայն որի համայնքի քնակչության կենսաապահովման խնդիրները լուծելու նպատակով մատուցվող ծառայությունների՝ ջրամատակարարման, ջրահեռացման, ոռոգման, ջեռուցման,</p>	<p>Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով</p>	<p>Մինչև 01.01. 2015թ</p>

			բազմաբնակարան շենքերի սպասարկման և այլ ծառայությունների իրականացման համար համայնքն օրենքով սահմանված կարգով սահմանում է վճարներ: Վճարների չափը համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատվում է համայնքի ավագանու որոշմամբ>>	աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման, բազմաբնակարան շենքերի սպասարկման և այլ ծառայությունների իրականացման համար օրենքով սահմանված կարգով պետք է հաստատված լինեն վճարներ		
13. Համայնքի կողմից իրականացվող ծառայությունների դիմաց կատարվող վճարների դրույքաչափերի վերաբերյալ ավագանու հաստատմանը ներկայացված որոշման առկայություն:			V << Համայնքի կողմից իրականացվող ծառայությունների դիմաց կատարվող վճարների դրույքաչափերի վերաբերյալ ավագանին կայացնում է որոշում >>	Դրույթը պահպանված չէ, <u>շեն պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> << օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ կետի պահանջները՝ համաձայն որի համայնքի ավագանին սահմանում է համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը	Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով	Մինչև 01.01. 2015թ
14. <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի և << կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի <<Գնումների գործընթացի կազմակերպման>> մասին թիվ 168 որոշման պահանջների պահպանում:			V 2014 թվականի ընթացքում գնումների պլան չի կազմվել, gnumner.am կայքում չի տեղակայվել	Չի պահպանվել Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի և << կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի <<Գնումների գործընթացի կազմակերպման>> մասին թիվ 168 որոշման պահանջները՝ համաձայն որի պետք է կազմվեր գնումների պլան և տեղակայվեր gnumner.am կայքում	Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով	Մինչև 01.01. 2015թ